



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
N10(11) 2009թ. օգոստոսի 21- սեպտեմբերի 20**

27 հոկտեմբերի, 2009թ.

<i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ</i>	3
1.1 Օրենքներ	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	3
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ	4
<i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</i>	5
<i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</i>	6
3.1 Կառուցվածք և գործառույթներ	6
3.2 Ծրագրեր և կատարողականություն	6
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների	8
3.4 Միջազգային համագործակցություն	8
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում	8
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն	8
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր	10

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 Օրենքներ

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն ստեղծելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	20 օգոստոսի, 2009թ., 947-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44(710), 02.09.09թ.
Ուժի մեջ է.	12 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ նախատեսվել է ստեղծել ՀՀ ԿԱ ՊԵԿ միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն: Սահմանվել է դրույթ, համաձայն որի մաքսատան պահպանման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Փաստաթուղթ	“ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 865-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 օգոստոսի, 2009թ., 945-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44(710), 02.09.09թ.
Ուժի մեջ է	12 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատան գործունեության տարածք է համարվում ՀՀ ամբողջ տարածքը: Որոշման հավելվածը լրացվել է նոր պարբերությամբ, որով հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատան հասցեն՝ քաղ. Երևան, Տիգրան Մեծի 1-ին փակուղի, 1:

Փաստաթուղթ	“ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 14-ի 484-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	27 օգոստոսի, 2009թ., 972-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 45 (711), 27.08.09թ.
Ուժի մեջ է	19 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ավտոտրանսպորտային միջոցների գազայցման գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողները այսուհետ պետք է ներկայացնեն ոչ միայն տեղեկություններ տվյալ ամսվա ընթացքում գազայցման տվյալ կայանի (կետի) միջոցով ստացված և իրացված գազի ֆիզիկական ծավալների մասին, այլ նաև տեղեկություններ հաստատագրված վճարի չափի մասին: Արդյունքում փոփոխվել է տեղեկությունների ներկայացման սահմանված ձևը՝ լրացվել է 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ տողերով:

Փաստաթուղթ	“ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 1-ի N 299-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	27 օգոստոսի, 2009թ., 979-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 45 (711), 09/09/2009թ.
Ուժի մեջ է	19 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ “ՀայՌուսգազարդ” ՓԲԸ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին պետք է տրամադրի տեղեկություններ յուրաքանչյուր ամսվա ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողներին մատակարարված գազի ֆիզիկական ծավալների մասին: Տեղեկությունները պետք է ներկայացնեն ըստ յուրաքանչյուր գազալցման կայանի (կետի) մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ: Որոշմամբ սահմանվել է նաև տեղեկությունների ներկայացման ձևը:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	“Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում տրամադրվող ֆինանսական աջակցության նպատակային գումարների հարկային հաշվառման մասին” ՀՀ ֆինանսների նախարարի 10.08.2009թ. թիվ 733-Ս և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 20.08.2009թ. թիվ 2325-Ս համատեղ պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	10 օգոստոսի 2009թ. N 733-Ս և 20 օգոստոսի 2009թ. N 2325-Ս
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 26 (344), 15.09.09թ.
Ուժի մեջ է	25 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնապես պարզաբանվել է “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի 3-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված դրույթների տարաբնույթ, երկիմաստ մեկնաբանությունը, մասնավորապես, երբ պետության կողմից հարկ վճարողներին տրվում են ֆինանսական աջակցության նպատակային գումարներ կոնկրետ ակտիվների ձեռք բերման համար, ապա այդ գումարները հարկային հաշվառմամբ որպես եկամուտ ճանաչելու հետ կապված հարցերը տարաբնույթ կերպ են ընկալվում: Պաշտոնապես պարզաբանվել է այս հարցը. պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում տրամադրվող ֆինանսական աջակցության նպատակային գումարները հարկային և հաշվապահական (ֆինանսական) հաշվառման նպատակով եկամուտ են ճանաչվում՝ հաշվի առնելով ՀՀ հաշվապահական հաշվառման թիվ 20 ստանդարտի դրույթները (ՀՀՀՀՍ 20՝ “Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում”)՝ մասնավորապես.

ա) պետական շնորհները պետք է ճանաչվեն որպես եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները,

բ) ամորտիզացվող (մաշվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են որպես եկամուտ այն տարում և այն համամասնություններով, ըստ որոնց հաշվարկվում է այդ ակտիվների մաշվածությունը,

գ) պետական շնորհը, որը հատկացվում է կազմակերպությանը ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսեր կրելու պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա գումար:

Փաստաթուղթ	“ՀՀ կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային բեռնափոխադրումների մասին” համաձայնագիրը հաստատելու մասին ՀՀ նախագահի հրամանագիրը
Ամսաթիվը և համարը	25 օգոստոսի, 2009թ., ՆՀ-200-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44(710), 02.09.09թ.
Ուժի մեջ է	03 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանագրի համաձայն հաստատվել է 2009թ. հունիսի 29-ին Երևանում ստորագրված “ՀՀ կառա-

վարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային բեռնափոխադրումների մասին” համաձայնագիրը:

Փաստաթուղթ	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.09.2009թ. N 5 “Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին” ՀՀ օրենքի դրույթների խախտման համար վարչական պատասխանատվության կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ” պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	7 սեպտեմբերի, 2009թ., N5
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 26 (344), 15.09.2009թ.
Ուժի մեջ է	25 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնապես պարզաբանվել են “Վարչական իրավախախտումների վերաբերյալ” ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 165-րդ հոդվածի («Արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի խախտումները») 1-ին, 2-րդ և 3-4-րդ մասերով սահմանված տարբեր պատասխանատվության միջոցների և «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) կիրառման բնագավառում ծագած մի քանի հարցեր, մասնավորապես.

1) Օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքները վերաբերվում են Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված՝ ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման (այդ թվում՝ (վերա)ապահովագրության, փոխառությունների տրամադրման) և աշխատանքների կատարման բոլոր տեսակի գնանշումներին (այդ թվում՝ դրանց գովազդներում և հրապարակային առաջարկներում (հրապարակային պայմանագրերում) փողային գնանշումներին) ու այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումներին: Ընդ որում՝ փոխառությունների տրամադրման դեպքում օրենքով նախատեսված սահմանափակումները վերաբերվում են միայն տոկոսներին:

2) Օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով տուգանքները վերաբերվում են Օրենքով նախատեսված՝ ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքներ չհանդիսացող դեպքերին:

Տուգանքները կիրառվում են նաև ՀՀ ԿԲ խորհրդի 29.07.2005թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Արժույթային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման» կարգի խախտման դեպքերում:

3) Պայմանագրով նախատեսված գույքային սանկցիաների (տույժեր, տուգանքներ) և փոխհատուցումների (բացառությամբ՝ ծախսերի փոխհատուցման դեպքերի, որոնց վրա տարածվում են Օրենքի պահանջները) գնանշման (արժեքավորման) և դրանց վճարման նկատմամբ Օրենքով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում և, հետևաբար՝ տուգանքներ չեն կիրառվում:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ	Սահմանադրական դատարանի որոշումը «2009թ. հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև «եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում և արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»
Ամսաթիվը և համարը	08 սեպտեմբերի 2009թ., ՍԴՈ-826
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 46 (712), 16.09.2009թ.
Ուժի մեջ է	8 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան և արձանագրությունն ստորագրվել են 2009թ. հունիսի 23-ին՝ Լյուքսեմբուրգում: Կոնվենցիայի նպատակը պայմանավորվող կողմերի միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:

Վերոնշյալ կոնվենցիայով նախատեսված է, որ այն կիրառվում է Պայմանավորվող պետություն-ներից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ՝ կապված Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի և գույքի նկատմամբ սահմանվող հարկերի հետ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

Կոնվենցիայով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գանձվող հարկերի տեսակները: Ըստ կոնվենցիայի՝ այն կիրառվում է նաև դրանում նախատեսված ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են կոնվենցիան ստորագրելուց հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն:

Փաստաթուղթ	Սահմանադրական դատարանի որոշումը «2009թ. մայիսի 22-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Խորվաթիայի Հանրապետության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»
Ամսաթիվը և համարը	08 սեպտեմբերի 2009թ., ՄԴՈ-821
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 46 (712), 16.09.2009թ.
Ուժի մեջ է	8 սեպտեմբերի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Վերոնշյալ համաձայնագիրը ստորագրվել է 2009թ. մայիսի 22-ին՝ Երևանում: Այն բաղկացած է 28 հոդվածից և համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Արձանագրությունից: Համաձայնագիրը դասվում է ընդհանուր բնույթի հարկային համաձայնագրերի շարքին, որոնք, որպես կանոն, ընդգրկում են հարկման ոլորտում պայմանավորվող պետությունների համագործակցությանը վերաբերող տարաբնույթ հարցեր: Համաձայնագրի կնքումը, հիմնականում, հետապնդում է երկու նպատակ՝ բացառել եկամուտների կրկնակի հարկումը և այդպիսով նվազեցնել եկամտային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի և ներդրումների վրա, ինչպես նաև ստեղծել կանխատեսելի և կայուն հարկային միջավայր:

Համաձայնագրով կանոնակարգվում են եկամուտների ստացման երկրում հիմնական եկամտատեսակների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները և, հատկապես՝ դրույքաչափերը:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Գառուցվածք և գործառույթներ

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքների շրջանակում մշակվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման 2009-2011թթ. հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանի նախագիծը: Հայեցակարգի հիմնական նպատակն է մշակել և հարկային համակարգում ներդնել առաջնակարգ տեղեկատվական տեխնոլոգիաների կիր-

րառման վրա հիմնված **միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ**, որը հնարավորություն կտա ավտոմատացնել հարկային մարմնում իրականացվող բոլոր գործընթացները, գործառույթների գերակշիռ մասը, ունենալ հարկ վճարողների վերաբերյալ տվյալների և տեղեկատվական ամբողջական շտեմարան, ինչպես նաև էապես բարձրացնել հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը: Հայեցակարգով սահմանվել են նաև **էլեկտրոնային կառավարման համակարգի** ենթահամակարգերը, դրանք են՝ էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ընդունման և մշակման, հարկ վճարողների հաշվառման, անձնական հաշվի քարտերի ավտոմատացված վարման, ԱԱՀ-ի և այլ հարկային գերավճարների վերադարձի և հաշվանցումների, կամերալ ուսումնասիրությունների ավտոմատացված ենթահամակարգեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 31.08.09թ. հաստատվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման զարգացման և կատարելագործման միջոցառումների մասին» հրամանը, համաձայն որի ստեղծվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ **էլեկտրոնային կառավարման համակարգի** բարեփոխումների խորհուրդ, հաստատվել է խորհրդի անհատական կազմը: Միաժամանակ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և համապատասխան տեխնիկական առաջադրանքի մշակման նպատակով ստեղծվել են մասնագիտացված աշխատանքային խմբեր (18 խումբ)՝ «Հարկատու-3»-ի հիման վրա ստանդարտ հաշվետվությունների կազմման ավտոմատ համակարգի ստեղծման, անձնական հաշվի քարտերի ավտոմատացված վարման, ԱԱՀ-ի գերավճարների վերադարձի և հարկային այլ գերավճարների հաշվանցման ծրագրի մշակման և ներդրման, ռիսկերի կառավարման, ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի ստեղծման, ներդրման և այլ ուղղություններով:

Հարկ վճարողների կողմից հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու նպատակով ստեղծվել է էլեկտրոնային հաշվետվությունների սպասարկման կենտրոն, որն իրականացնում է էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնելու պայմանագրի կնքման, համապատասխան էլեկտրոնային ծածկագրերի տրամադրման աշխատանքներ:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527-Ն որոշմամբ հաստատված Հարկային և մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012թթ. ծրագրով 2009 թվականի 3-րդ եռամսյակի համար նախատեսված է իրականացնել 5 միջոցառում, մասնավորապես.

1. Մաքսային գործի տարբեր ոլորտների գծով ուսումնական տարբեր ինտերակտիվ ծրագրերի ձեռքբերում և դրանց միջոցով դասընթացների կազմակերպում,
2. Ռիսկի կառավարման համակարգում մոնիտորինգի, վերահսկման, ռիսկերի չեզոքացման կամ նվազեցման համակարգի ձևավորում,
3. «Ռիսկի պրոֆիլների» ստեղծում, որոնք ընդգրկում են տեղեկատվություն և ցուցումներ մաքսային մարմիններին՝ ռիսկային ապրանքների, մաքսային հսկողության իրականացման, հսկողության խորության, հաճախակիության և այլնի վերաբերյալ,
4. Հատուկ ծրագրային համակարգերի ներդրում, որոնց միջոցով հնարավոր կլինի մշտապես մոնիտորինգի ենթարկել մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը՝ կրճատելով ավելորդ ժամանակը,
5. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների իրականացում:

Վերոնշյալ միջոցառումներն իրականացվել են նախատեսված ժամկետներում, բացառությամբ մեկ միջոցառման՝ «Հատուկ ծրագրային համակարգերի ներդրում, որոնց միջոցով հնարավոր կլինի մշտապես մոնիտորինգի ենթարկել մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը՝ կրճատելով ավելորդ ժամանակը»: Այս միջոցառման իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ իրականացնել TWM ավտոմատ հայտարարագրման համակարգում: Այդ նպատակով տեխնիկական առաջարկություն է ներկայացվել WEBFOUNTEIN ընկերությանը, որպեսզի համապատասխան փոփոխություններ իրականացվեն TWM ավտոմատ հայտարարագրման համակարգում, որի արդյունքում հնարավոր կլինի մոնիտորինգի ենթարկել մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը: TWM ավտոմատ հայտարարագրման համակարգում իրականացվելիք փոփոխությունների ֆինանսավորումը ակնկալվում է Համաշխարհային բանկից, որի հետ ներկայումս բանակցություններ են վարվում:

Մաքսային գործի տարբեր ոլորտների գծով ուսումնական տարբեր ինտերակտիվ ծրագրերի ձեռք-բերման և դրանց միջոցով դասընթացների կազմակերպման նպատակով եվրոպական կառույցների հետ համապատասխան պայմանավորվածություն է ձեռք բերվել 2 ուսումնական ծրագրերի /կո-ռուպցիոն ռիսկերի գնահատում և կառավարում, հետբացթողումային հսկողություն/ անցկացման վե-րաբերյալ, որը կիրականացվի ԵՄ խորհրդատվական խմբի աջակցությամբ:

Բացի այդ, 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել են մի շարք ուղեցույցերի մշակման և հրա-տարակման աշխատանքներ, մասնավորապես արդեն հրատարակման փուլում է գտնվում «Ապրանք-ների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության իրականացումը ՀՀ-ում» ձեռ-նարկը և «ՀՀ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման մաքսային ընթացակարգերի վերաբերյալ» ուղեցույցը, իսկ «ՀՀ մաքսային սահմանով իրավաբանական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղա-փոխման մաքսային ընթացակարգերի վերաբերյալ» ուղեցույցը գտնվում է մշակման փուլում:

Վերոնշյալ ձեռնարկը և ուղեցույցները ընդգրկում են մաքսային ընթացակարգերին վերաբերող բոլոր ոլորտները, ուղեցույցներում մատչելի ձևով պարզաբանված են մաքսային մարմիններին և ֆիզիկական ու իրավաբանական անձանց վերաբերող բոլոր օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, ինչը հնարավորություն կտա էապես բարձրացնել մաքսային ընթացակարգերի հրապարակայնության և մատչելիության աստիճանը:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

21.08.2009թ.-ից մինչև 20.09.2009թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձ-նաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 8 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատաս-խանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.08.2009թ.-ից մինչև 20.09.2009թ.-ը քննարկվել է ընդամենը թվով 16 բողոք, որից.

- բավարարվել է 1 բողոք,
- բավարարվել է մասնակի 2 բողոք,
- կարճվել է 1 բողոք,
- մերժվել է 12 բողոք:

3.4 Միջազգային համագործակցություն

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

2009թ. սեպտեմբերի 8-ին կայացել է ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների հա-մալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 174 քաղա-քացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային ծառայության 27 թափուր պաշտոն:

2009թ. օգոստոսի 20-ից սեպտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում մաքսային ծառայության 2 թափուր պաշտոնների համար հայտարարվել է մրցույթ, որի համար դիմել է 16 քաղաքացի:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության «Թեժ գիծ»-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՄ «Թեժ գծով» ստացվել է 278 բողոքներ և առաջարկություններ:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզաբանության տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, ՏՀՏ-ներում առաջացած հերթերին, սեպտեմբերի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի:

Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային

օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 20-ը “Թեժ գծով” ստացվել է 350-400 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 4 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, մաքսային ընթացակարգերի, ինչպես նաև արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում է տրվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 20-ը ստացված բոլոր բողոքներին արձագանքվել է:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009 թվական		
		օգոստոս	հունվար-օգոստոս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-օգոստոս), %
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1160	10735	73.6
2	Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	31,938.1	250,658.0	88.3
2.1	ԱԱՀ	6,980.9	48,755.8	74.0
2.2	Շահութահարկ	5,536.1	56,815.4	94.3
2.3	Ակցիզային հարկ	387.9	3,650.7	80.3
2.4	Եկամտահարկ	5,081.8	37,516.1	108.8
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	8,596.3	65,463.3	101.8
2.6	Այլ	5,355.0	38,455.8	70.5
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2,373	18,213	161.5
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	3,351.6	20,929.4	72.7

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ, %	
		հունվար-օգոստոս	օգոստոս	հունվար-օգոստոս	օգոստոս	հունվար-օգոստոս	օգոստոս
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	177 841	27 678	137 327	20 763	77.2	75.0
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 039 650	113 210	875 021	133 392	84.2	117.8
2.1	արտահանում (մլն դրամ)	212 342	17 814	170 653	23 949	80.4	134.4
2.2	ներմուծում (մլն դրամ)	827 308	95 396	704 368	109 443	85.1	114.7
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	23 512	4 195	16 056	3 255	68.3	77.6